# ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N <<ԱԳՆ ՇՀԾՁԲ-14/1-4>>

<<09>> հունվարի 2013թ.

ք. Երևան

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Շ.Ավագյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Յուքոմ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Եսայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ''Ինտերնետային կապի դրամադրման'' ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 2040000 (Երկու միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.1.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները կմատուցվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր: Պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պ ա տ վ ի ր ա տ ու | Կ ա տ ա ր ո ղ |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ք.Երևան,Հանրապ.Հրապ.,Կառ. 2 շենք<br>ՀՎՀՀ՝ 02527728<br>Հ/Հ 900011196095<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն<br><br>---------- [illegible]յան<br>/ստորագրություն/<br><br>Կ.Տ. | Իրավ. հասցե ք. Երևան, Տերյան 19, բն 4<br>Գործ. հասցե ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1<br>«Էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ<br>Հ/Հ 001-264993-001<br>ՀՎՀՀ 00024873<br>էլ. հասցեն՝ corporate@ucom.am<br><br>Հեռ. 060-44-44-44<br>---------- [illegible]յան<br>/ստորագրություն/<br><br>Կ.Տ. |

Հավելված 1
09.01. 2014թ. կնքված N ԱԳՆ ՇՀԾՁԲ-14/1-4
ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափաբաժն 1 | Ձեռքբերվող Ծառայության նկարագիր |
|---|---|
| **1.Ինտերնետային կապի տեսակը**<br><br>**2.Ինտերնետային կապի միացման նախապայմանները**<br><br>**3.Ինտերնետային կապի երաշխավորված արագությունը օպերատորի ցանցային հանգույցի և օգտվողի միջև**<br><br>**4.Ինտերնետային կապի սպասարկման նախապայմանները**<br><br>5. Այլ պահանջներ<br><br>**6. Ինտերնետային կապի հետ կապված՝ լրացուցիչ ծառայություններ** | **Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով**<br>**Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում**<br>**Անհրաժեշտ կոմունիկացիաների և սարքերի տեղադրում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն N2, 5 հարկ)**<br>**Անհրաժեշտության դեպքում՝ օպտիկամանրաթելային մալուխի անցկացում մինչև օգտվողի կողմից նշված կետը (ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն N2, 5 հարկ)**<br>**Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով՝ 70 մ.բիթ/վարկյան երաշխավորված**<br>**Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով**<br>**երաշխավորված երկկողմանի /մուտքային և ելքային/ սիմետրիկ կապի արագություն /70մ.բիթ/վարկյան/**<br>**Անհրաժեշտության դեպքում՝ պահուստային միացման առկայություն ապահովելով համարժեք արագագործությունը**<br>**Անհրաժեշտության դեպքում՝ հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում**<br>**Պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադ մինչև 250 հասցե**<br>**".am" տիրույթում ենթատիրույթի գրանցում և պահպանում** |

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | ավարտը |
| 2014 թվականի հունվար ամսից Մատուցման ժամկետը ոչ պակաս քան 30աշխատանքային օր | 25.12.2014թ |

| **Պ ա տ վ ի ր ա տ ու** | **Կ ա տ ա ր ո ղ** |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ք.Երևան,Հանրապ.Հրապ.,Կառ. 2 շենք<br>ՀՎՀՀ՝ 02527728<br>Հ/Հ 900011196095<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն<br><br>------------- Ծ.Ավագյան<br>/ ստորագրություն | Գործ. հասցե ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1<br>«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ<br>Հ/Հ 001-264993-001<br>ՀՎՀՀ 00024873<br>էլ. հասցեն՝ corporate@ucom.am<br>Հեռ. 060-44-44-44<br>----------- ...յան<br>(ստորագրություն) |

Կ.Տ.

Հավելված 3
09.01. 2014 թ. կնքված N ԱԳՆ-ՇՀԾՁԲ-14/1-4
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող

______________________

______________________

գտնվելու վայրը ___________

հհ ___________________

______________________

հվհհ _________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ___________

հհ___________________

______________________

հվհհ_________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<__________________>> 2014թ.

Պայմանագրի անվանումը՝

________________________________________________________________

________________________________________________________________

______

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<________________>> 2014 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________ և
Կատարողը՝ ի դեմս______________________________________________,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ ________ 2014թ-ից __ ________ 2014 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունների մատուցումը

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Ծառայությունների մատուցման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

ծառայությունը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

ծառայությունը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

## «09» հունվարիի 2014թ. N <<ԱԳՆ ՇՀԾՁԲ-14/1-4>> գնման պայմանագրի

*ք. Երևան* *«20»հունվարի 2014թ.*

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Շ.Ավագյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ.Եսայանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2014 թվականի հունվարի 9-ին կողմերի միջև կնքված N ԱԳՆ-ՇՀԾՁԲ-14/1-4 ծածկագրով գնման պայմանագրի 7.1.1 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2014 թվականի հունվարի 9-ին կնքված N <<ԱԳՆ ՇՀԾՁԲ-14/1-4>> ծածկագրով գնման պայմանագիրը լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով (Հավելված 2)՝ համաձայն հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պ ա տ վ ի ր ա տ ու | Կ ա տ ա ր ո ղ |
| --- | --- |
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ք.Երևան,Հանրապ.Հրապ.,Կառ. 2 շենք<br>ՀՎՀՀ՝ 02527728<br>Հ/Հ 900011196095<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն<br>_____________ Շ.Ավագյան<br>/ ստորագրություն /<br>Կ.Տ | Յուքոմ ՍՊԸ<br>Իրավ. հասցե ք. Երևան, Տերյան 19, բն 4<br>Գործ. հասցե ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1<br>«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ<br>Հ/Հ 001-264993-001<br>ՀՎՀՀ 00024873<br>Էլ. հասցե՝ corporate@ucom.am<br>Հեռ՝ 060 44 44 44<br>_____________ Հ.Եսայան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված 2
09.01. 2014թ. կնքված
N ԱԳՆ ԾՀԾՁԲ-14/1-4 ծածկագրով գնման պայմանագրի

# ՎճԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | Օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն | 170000 | 340000 | 510000 | 680000 | 850000 | 1020000 | 1190000 | 1360000 | 1530000 | 1700000 | 1870000 | 2040000 | **2040000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ք.Երևան,Հանրապ.Հրապ.,Կառ. 2 շենք<br>ՀՎՀՀ՝ 02527728<br>Հ/Հ 900011196095<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն<br>______________ Ն. Ավագյան<br>/ ստորագրություն/ | Յուքոմ ՍՊԸ<br>Գործ. հասցե ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1<br>«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ<br>Հ/Հ 001-264993-001<br>ՀՎՀՀ 00024873<br>Էլ. հասցեն՝ corporate@ucom.am<br>Հեռ. 060-44-44-44<br>______________ Հ. Եսայան<br>(ստորագրություն) |